Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի « Այգեստանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (5 դասաժամ) տղաների խումբ, ինֆորմատիկայի (8 դասաժամ), ֆիզկուլտուրայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ) ՝ « Հանրակրթության մասին » ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 25 -ին՝ ժամը 15^{00}-ին, Արարատի մարզի Այգեստանի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Այգեստան, Զ.Մարգարյան 15:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0235) 6-14-84 կամ (095) 72 78 72 հեռախոսահամարներով:

Տնօրեն՝ / /Ս.Թարվերդյան